

# Հեռակառավարման վահանակ

Ինչպե՞ս կարգավորել C-BOX-ի հեռակառավարման վահանակի միջոցով հեռուստացույցի կառավարումը

**Քայլ 1.** Երկար սեղմել C-BOX սարքի հեռակառավարման վահանակի SET կոճակի վրա (C-BOX սարքի անջատման / միացման կոճակը պետք է ստանա տեսանելի կարմիր լուսային գունավորում):

**Քայլ 2.** Հեռուստացույցի և C-BOX սարքի վահանակները պահել դեմ դիմաց: Նախ սեղմել C-BOX սարքի վահանակի անջատման / միացման կոճակը: Այնուհետև սեղմել և պահել համապատասխան կոճակը հեռուստացույցի վահանակի վրա՝ մինչև լուսային ազդանշանի մարումը (նույն գործողությունը կրկնել նաև վիդեո-մուտքի / ձայնի կառավարման կոճակների համար):

**Քայլ 3.** Հեռուստացույցի վահանակի առանձին կոճակների ֆունկցիաները C-BOX-ի վահանակի վրա ձայնագրելուց հետո կարող եք հեռուստացույցը կառավարել C-BOX-ի վահանակի միջոցով:

